Բաց կանչ. Հետազոտական աշխատանքների մրցույթ

«Մեծահասակների ուսումնառության և կրթության հետազոտահեն համաժողովի» շրջանակում

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ, իրականացնում է «Մեծահասակների ուսումնառության և կրթության հետազոտահեն համաժողով» նախաձեռնությունը, որի շրջանակներում հայտարարում է սահմանված ուղղություններով հետազոտությունների մրցույթ ԵՊՀ դասախոսների/ հետազոտողների և ուսանողների շրջանում:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023թ. ապրիլի 5-ը՝ ժամը 18:00:

Մրցույթի պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ստորև:

Համատեքստ

2022թ. հունիսի 15-17-ը Մարաքեշում (Մարոկկոյի թագավորություն) տեղի ունեցավ Մեծահասակների կրթության 7-րդ միջազգային համաժողովը (CONFINTEA VII), որը կրում էր «Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը հանուն կայուն զարգացման. տրանսֆորմացիոն օրակարգ» խորագիրը: Համաժողովին ներկայացված Մեծահասակների ուսումնառության և կրթության 5-րդ գլոբալ զեկույցը ամփոփում էր Մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) ոլորտում տարբեր երկրների ձեռքբերումները և առկա մարտահրավերները, ինչպես նաև ուրվագծում հետագա առաջնահերթությունները ՄԱԿ Կայուն զարգացման նպատակների 2030 Օրակարգի շրջանակներում:

Համաժողովի հիմնական արդյունքը 142 երկրների կողմից ընդունված «Մարաքեշի գործողությունների շրջանակն» է, որը փոխարինում է նախորդ՝ «Բելեմի գործողությունների շրջանակին»՝ ուղենիշ դառնալով հաջորդ տասնամյակի ընթացքում ՄՈՒԿ արդյունավետ քաղաքականության և պրակտիկայի մշակման և իրականացման համար:

Փաստաթուղթը սահմանում է գործողությունների հիմնական շրջանակը, որն անհրաժեշտ է բոլորի համար ուսուցման հավասար հնարավորություններ ապահովելու և ցկյանս ուսումնառության մշակույթ ձևավորելու համար՝ ներառյալ երիտասարդների և մեծահասակների ուսումնառության բոլոր տեսակները (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ), ուսուցման տարատեսակ հարթակները և այլն:

Բոլոր անդամ պետությունները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, պարտավորվել են ջանքեր գործադրել կատարելագործելու կառավարման մեխանիզմները և մշտադիտարկման շրջանակները, ինչպես նաև բարելավել մեծահասակների ուսումնառության և կրթության որակը՝ ավելացնելով ներդրումների ծավալը:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը, առաջնորդվելով Մեծահասակների կրթության միջազգային համաժողովների (CONFINTEA) որոշումներով և ընդունված փաստաթղթերով, իր տարածաշրջանային և տեղական գրասենյակների և գործընկեր կառույցների միջոցով քայլեր է ձեռնարկում համաժողովի մասին իրազեկության բարձրացման, ընդունված որոշումների տեղայնացման և իրականացման ուղղությամբ: Այս համատեքստում դեռևս 2022թ. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաստանի նախաձեռնությամբ հայերեն է թարգմանվել «Մարաքեշի գործողությունների շրջանակը» և տրամադրվել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը և գործընկեր կառույցներին:

2023թ. մարտ – հոկտեմբեր ժամանակահատվածում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, Երևանի պետական համալսարանի Շարունակական կրթության կենտրոնի հետ համատեղ, իրականացնում է «Մեծահասակների ուսումնառության և կրթության հետազոտահեն համաժողով» նախաձեռնությունը, որի հիմնական նպատակներից մեկն է «Մարաքեշի գործողությունների շրջանակի» հանրահռչակումը ՄՈՒԿ ոլորտի մասնագետների, ուսանողների և ոլորտում գործող կառույցների շրջանում:

Նախաձեռնությունը ներառում է երկու հիմնական գործողություն.

1. դասախոսների/ հետազոտողների ղեկավարությամբ հետազոտությունների իրականացում ուսանողական խմբերի կողմից,

2. արդյունքների հիման վրա եզրափակիչ համաժողովի անցկացում:

Հետազոտությունների արդյունքները կներկայացվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, ինչպես նաև ոլորտում գործող այլ կառույցներին և փորձագետներին:

Նպատակ

Նախաձեռնության հիմնական նպատակն է ՄՈՒԿ ոլորտի մասնագետների, ուսանողների և ոլորտում գործող կառույցների շրջանում «Մարաքեշի գործողությունների շրջանակի» հանրահռչակումը՝ փաստաթղթում նշված ոլորտների ուղղությամբ ՀՀ համատեքստում հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացման և լայն հանրությանը դրանց արդյունքները ներկայացնելու միջոցով: Հետազոտությունները կնպաստեն նաև Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից 2020-2022 թթ. Հայաստանում Մեծահասակների կրթության բնագավառում իրականացված բազմաթիվ հետազոտությունների և ուսումնասիրությունների համալրմանը[1] և դրանց շարունակականության ապահովմանը:

Ով կարող է դիմել

[1] https://www.dvv-international.ge/fileadmin/files/caucasus-turkey/Armenia/Other/Survey_ARM_FINAL.pdf

Հետազոտությունն իրականացնելու համար կարող են դիմել նախկինում հետազոտական փորձ ունեցող ԵՊՀ դասախոսները/հետազոտողները մինչև 3-հոգանոց ուսանողական խմբով (1 դասախոս/հետազոտող + 1 ուսանող, 1 դասախոս/ հետազոտող + 2 ուսանող, 1 դասախոս/ հետազոտող + 3 ուսանող)՝ ներկայացնելով լրացված հայտադիմումը: Խմբում կարող են ընդգրկված լինել բակալավր 3-րդ կուրսի, մագիստրատուրա 1-ին կուրսի և/կամ հեռակա 1-ին և 2-րդ կուրսի ուսանողներ՝ ստորև նշված ֆակուլտետներից / բաժիններից.

1. Սոցիոլոգիա
2. Տնտեսագիտություն (ֆինանսներ)
3. Մաթեմատիկա (ֆինանսական մաթեմատիկա, կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն)
3. Իրավագիտություն
4. Պատմություն (մշակութաբանություն/ազգագրություն)
5. Միջազգային հարաբերություններ (հանրային (պետական) կառավարում, հանրային (պետական) քաղաքականություն)
6. Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն
7. Բանասիրություն
8. Քաղաքագիտություն
9. Ժուռնալիստիկա
10. Փիլիսոփայություն եւ հոգեբանություն:

Միջգիտակարգային խմբով դիմելը կդիտվի որպես առավելություն:
Օտար լեզուների, հատկապես անգլերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն:

Հետազոտական թիմերի ընտրություն

Հետազոտություններն իրականացնելու համար հայտ ներկայացրած խմբերից կընտրվի 5-6 խումբ՝ երկու փուլով:

Փուլ 1: Առաջին փուլում սույն նախաձեռնությամբ հետաքրքրվող ԵՊՀ դասախոսները / հետազոտողները պետք է լրացնեն և ուղարկեն այս հայտադիմումը՝ հետևյալ էլեկտրոնային հասցեներին.

asryan@dvv-international.am

postgraduate@ysu.am

Ստացված հայտերից կընտրվեն հաջորդ փուլ անցնող առաջարկները՝ ըստ ստորև նշված չափանիշների.

- Հետազոտական խմբի կազմի համապատասխանություն սահմանված պահանջներին, այդ թվում դասախոսի հետազոտական փորձը (ուսանողական խմբերի հետ աշխատելու փորձը կհամարվի առավելություն) և ուսանողների խումբը

- Առաջարկվող թեմայի մասնավորեցումը և համապատասխանությունը ներկայացված թեմատիկ ուղղությունների շրջանակին:

Փուլ 2: Առաջինը փուլը հաղթահարած թիմերին կառաջարկվի ներկայացնել ամբողջական հայտադիմում (ձևաթուղթը կտրամադրվի երկրորդ փուլ անցած թիմերին): Ներկայացված հայտերից մասնագիտական ժյուրին կընտրի լավագույն 5-6 հետազոտական նախագծերը՝ ըստ ստորև սահմանված չափանիշների:

Ընտրության չափանիշներ	Առավելագույն միավոր
Հայտի ամբողջական և պատշաճ լրացում	10
Ընտրված թեմայի և հետազոտության խնդիրների հիմնավորվածությունը	20
Մեթոդաբանության հստակությունը և համապատասխանությունը ընտրված թեմային	20
Ընդամենը	**50**

Ֆինանսավորում

Ընտրված հետազոտական խմբերը կստանան ֆինանսական աջակցություն հետազոտությունն իրականացնելու համար: Ֆինանսավորման չափը **1.500-2000 եվրոյին** համարժեք ՀՀ դրամ է (հարկերը ներառյալ)՝ կախված ներկայացված հետազոտական նախագծի բնույթից և մեթոդաբանությունից:

Հետազոտության իրականացման և վերջնական զեկույցի ներկայացման համար հիմնական պատասխանատվությունը կրում է դասախոսը/հետազոտողը, ում հետ կկնքվի պայմանագիր և ում կփոխանցվի համապատասխան գումարը: Այնուհետև, դասախոսը/հետազոտողը, որպես խմբի ղեկավար, պարտավորվում է ստացված գումարից իրականացնել հետազոտության համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև վարձատրել թիմում ընդգրկված անձանց: Հետազոտական թիմում ներառված յուրաքանչյուր ուսանող պետք է ստանա նվազագույնը 50,000 ՀՀ դրամ՝ որպես իր կողմից իրականացված աշխատանքի փոխհատուցում:

Հետազոտությունների թեմատիկ շրջանակ

Հետազոտությունները պետք է իրականացվեն ստորև նշված թեմատիկ ուղղությունների շրջանակում.

1. Ֆունկցիոնալ գրագիտություն
2. Թվային գրագիտություն
3. «Մեծահասակների կրթությունը Հայաստանում» հետազոտության երկրորդական տվյալների վերլուծություն
4. Մեծահասակների ուսումնառության և կրթության նորարարական ձևաչափեր և թեմաներ
5. Ուսումնառություն աշխատավայրում (առնվազն 5 դեպքի ուսումնասիրություն)
6. GRALE զեկույցի համեմատական վերլուծություն Հարավային Կովկասի երկրների համար (տվյալների բազայի ուսումնասիրություն)
7. Բարձրագույն կրթությունը և քաղաքացիական կրթությունը
8. Միջազգային լավագույն ՄՈՒԿ պրակտիկաների համեմատություն (իրավական, քաղաքական, հոգեբանական հիմքերը)
9. ՄՈՒԿ ֆինանսավորման աղբյուրները (ԵՊՀ, ՀԿ-ների գործունեության օրինակով, այլ)
10. Անդրագոգիան որպես մասնագիտություն (տարբեր երկրների փորձի համեմատություն)
11. ՄՈՒԿ եզրութաբանության տարածման լեզվաբանական, հոգեբանական և իրավական կողմերը:

Ներկայացված թեմաները շատ ընդհանրական են. հետազոտական նախագծի հայտադիմումի մեջ թիմերը պետք է հստակ ձևակերպեն իրենց կողմից առաջարկվող հետազոտության թեման և հետազոտական խնդիրը: Թեմաների հստակեցման համար նույնպես կտրամադրվի խորհրդատվական աջակցություն: Հետազոտությունների մեթոդաբանության մեջ կարելի է ներառել՝

- Գրասենյակային հետազոտություն
- Երկրորդական տվյալների վերլուծություն
- Դեպքի ուսումնասիրություն
- Հարցազրույցներ
- Ֆոկուս խմբային քննարկումներ
- Այլ

Ընտրված խմբերի հետ կազմակերպչական թիմի քննարկումների արդյունքում հնարավոր են նշված թեմաների որոշակի փոփոխություններ և վերանայումներ:

Արդյունքների ներկայացում

Հետազոտությունների արդյունքները կներկայացվեն 2023թ. հոկտեմբերին Երևանի պետական համալսարանում կայանալիք ամփոփիչ, ինտերակտիվ համաժողովի ժամանակ:

Հետազոտությունների արդյունքները կներկայացվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, ինչպես նաև ոլորտում գործող այլ կառույցներին և փորձագետներին:

Հայտերի ներկայացում

Բոլոր հետաքրքրվող ԵՊՀ դասախոսները/ հետազոտողները կարող են մասնակցել մրցույթին՝ լրացնելով **հետևյալ հայտադիմումը և ուղարկելով այն asryan@dvv-international.am և postgraduate@ysu.am էլեկտրոնային հասցեներին մինչև սույն թվականի ապրիլի 5-ը, ժամը՝ 18:00:** Ավելի ուշ ներկայացված հայտերը չեն դիտարկվի:

Բոլոր հետաքրքրված անձանց համար մարտի 28-ին ժամը 16:00-ին տեղի կունենա առցանց տեղեկատվական հանդիպում: Հանդիպմանը կարող եք միանալ հետևյալ հղումով՝ https://us02web.zoom.us/j/86322398822?pwd=ZmtoSCtrWXJsL1hqSy9Jay85WElHdz09

Աշխատանքների իրականացման ժամանակացույց

Մարտ 28, ժամը՝ 16:00	Առցանց տեղեկատվական հանդիպում հետաքրքրված մասնակիցների համար
Ապրիլ 5, ժամը՝ 18:00	Առաջին փուլի հայտերի ներկայացման վերջնաժամկետ
Ապրիլ 14	Առաջին փուլի ընտրության արդյունքների տեղեկացում թիմերին: 2-րդ փուլի հայտարարում:
Ապրիլ 28, ժամը՝ 18:00	Ամբողջական հայտերի ներկայացման վերջնաժամկետ
Մայիս 5-15	Հայտերի գնահատում հանձնաժողովի կողմից և 5-6 խմբի ընտրություն
Մայիս 24	Տեղեկատվական դեմառդեմ հանդիպում ընտրված թիմերի հետ *(հանդիպման վայրի և ժամի մասին հավելյալ կտեղեկացնենք ընտրված թիմերին)*
Հունիս - Սեպտեմբեր	Հետազոտությունների իրականացում և մենթորական աջակցություն
Սեպտեմբեր 15, ժամը՝ 18:00	Հետազոտական աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ
Սեպտեմբեր 15 - 30	Հետազոտական աշխատանքների վերանայում, վերջնականացում
Հոկտեմբեր 15 -30 ժամանակահատվածում	Ամփոփիչ համաժողով ԵՊՀ-ում

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել կազմակերպչական թիմի հետ asryan@dvv-international.am և postgraduate@ysu.am էլեկտրոնային հասցեներով: